

ԴԵՂԱԳՈՐԾ ԲԺՇԿՈՒՂԻ
ՕՐ. ՄԱՐԻԱՄ ՇԱՊԱՆԵԱՆ



Ինչ խեղճի ժողովուրդ, իր խեղճիտքիւնը
կը տարածուի ոչ թէ մեկ տեսակ, այլ ամեն
տեսակ ստարեգներու մէջ: Այսպէսով Մա-
րիեքրան ալ օտարութեան մէջ և օտար-
ներու առջեւ, հայ ազգային պատուի գան-
ձանակին մէջ կը ձգէր իր փոքրիկ՝ բայց
գեղեցիկ լուսնը:

Թէ Օր. Մարիեքրանի և թէ իր սիրելի
ծնողներուն յոգնութիւններն ու զոհողու-
թիւնները այդ օրը կը ստանային իրենց
լիով վարձատրութիւնը, երբ Մարիեքրան
քննիչ յանձնախումբի խնդակցութեան հետ
կ'ընդունէր նաեւ բարձրագոյն թիւը ստա-
ցած ըլլալուն ուրախալի լուրը:

Օր. Մարիեքրան շառաւիղն է Շապանեան
Գաղանձեան նշանաւոր գերդաստաննե-
րու, առաջինը Կարենցի, իսկ երկրորդը
Կովկասահայ, դուստրը Պ. Յովհաննէս ու
տիկին Աշխէն Շապանեաններու, քեռորդի
Մուրատ-Ռափայէլեան վարժարանի նախ-
կին աշակերտ՝ Փրոֆ. Յարութիւն Գա-
ղանձեանի, որ ներկայիս Միւսնի պետական
համալսարանի երկրաչափութեան դասա-
խօսներէն է:

Ծնած է 1927-ին Իտալիոյ Cosenza քա-
ղաքը, ուր ծնողքը դործի բերումով կը
բնակէին: Պ. Յովհաննէս գարեջուրի շի-
նութեան մասնագէտ է: Օրիորդը իր նախ-
նական ուսումն ու կրթութիւնը ստացած
է Հռովմի S. Giuseppe գիշերօթիկ վար-
ժարանի մայրապետներու մօտ: Իսկ իրիտ-
նական ընթացքը շատ յաջողութեամբ ա-
ւարտած է Հռովմի «Virgilio» պետական
առաջնակարգ լիկէոնի մէջ, յաճախած է
ապա նոյն քաղաքի պետական համալսարանի
հնդամեայ գեղագործութեան ընթացքին:

Օր. Մարիեքրանի այս բացառիկ յաջողու-
թիւնը ասիւթ առնելով՝ «Բազմավեպ» իր
ջերմագին խնդակցութիւնը կը յայտնէ թէ
իրեն, թէ իր ազնիւ ծնողներուն, թէ Փրոֆ.
Յարութիւն Գաղանձեանին և թէ իր ընտա-
նիքի բոլոր միւս պատուական անդամներուն,
մաղթելով Օր. Մարիեքրանին նորանոր յա-
ջողութիւններ և ուրախ օրեր: ԽՄԲ.

Ինչ քաղցրարարոյ և ուրախ բնաւու-
րութեան պատճառով հասարակարար ա-
մէնքէն սիրուած, ամէնուն ծանօթ և ամէնքէն
կոչուած Մարիեքրան, Մարտ 12-ին, շատ
փայլուն քննութենէ մը վերջ, Հռովմի պե-
տական համալսարանէն կը ստանար գեղա-
գործ բժշկուհիի վկայականը: Իր ներկայա-
ցուցած աւարտաճառին տիտղոսները են.
«Vitamina A.», «Sulla chimica della
gran-positività», «Meccanismo di for-
mazione della vitamina PP.», պաշտպա-
նած Փրոֆ. Di Mattei առարկութիւններուն
դէմ: Հայասէր ու գիտնական փրոֆէսորը Օր.
Մարիեքրանի պաշտպանողականէն վերջ,
դառնալով քննիչ յանձնաժողովի միւս ան-
դամներուն, պաշտպանողականի մասին իր
գոհունակութիւնը յայտնած է այսպէս. «Ma
che popolo intelligente. (ակնարկելով
հայերուն) intelligenza che si versa non
in un solo campo ma in tutti i campi»:

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

ԵՒ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Լուի Ֆիլիբի օրերէն մինչեւ այսօր
Ֆրանսական կառավարութիւնը բարեացա-
կամ աչքով նայած է միշտ հայկական մը-
շակոյթի առընթեր՝ Ֆրանսական լեզուի
և գրականութեան ընդհանուր մշակոյթի
տարածման համար Միւլթարեան Հայրե-
րու կառարած լայն դործունէութեան:
Երկրորդ Հասարակապետութեան օրով
Ալֆոնս Լամարթին բանաստեղծը և մեծ
հայրենասէրը, հայ երիտասարդութեան
հանդէպ յատուկ դուրդուրանքով մը լե-
ցուն, նպաստեց զրջով և իր ճարտասանի
լեզուով Մուրատեան վարժարանի բարգա-
ւաճումին:

Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանը իր
առանձնապատուկ դիրքով և արժանիքով
Խաղաղական կառավարութեան կողմէ ար-
դէն գնահատուած, և 1897ի Արքայական
Հրովարտակով Համադոր հռչակուած Ի-
տալական լիսէնցիոն, Ֆրանսայէն եւս
1931-ին կը ստանար գնահատանքի բարձր
հաւաստիքը:

Մուրատ-Ռափայէլեան վարժարանը կը
մտնէր այսպէս չարքին մէջ այն բարձր
Հաստատութիւններու, որոնց վկայականը
Իրաւունք կու տայ դայն արժանապէս ըս-
տացողներուն՝ արձանագրուելու Ֆրան-
սայի և գաղթալայրերու Համալսարան-
ներուն մէջ, առանց պետական քննու-
թիւններու ներկայանալու: Մուրատ-Ռա-
փայէլեան վարժարանի վկայականը ճանչ-
ցուած է հետեւաբար համադոր Ֆրանսա-
կան Պաֆալաուրէայի իր հետեւորդ բոլոր
արդիւնքներով:

Հոս կու տանք պետական այդ վճիռ -
հրովարտակը.

MINISTERE

de l'Instruction Publique & des Beaux Arts

Journal Officiel du 31 Octobre 1931

Page 11402/403

Titres étrangers admis en équivalence
du Baccalauréat

Le ministre de l'Instruction Publique et
des Beaux Arts,

- Vu l'arrêté du 16 Novembre 1915
relatif aux demandes d'équivalence
du Baccalauréat de l'enseignement
secondaire en vue des études uni-
versitaires faites par des Français
d'origine ayant résidé à l'étranger,
- Vu l'arrêté du 16 Novembre 1915
relatif aux demandes d'équivalence
du Baccalauréat de l'enseignement
secondaire en vue des études uni-
versitaires faites par des étrangers
ayant accompli leurs études à l'é-
tranger modifié par l'art. 1^o de l'ar-
rêté du 21 Juillet 1931,
- Vu le décret du 13 Janvier 1916 con-
cédant la gratuité des équivalences
accordées en vue des études univer-
sitaires aux étrangers pourvus de
titres étrangers,
- Vu l'art. 6 du décret du 27 Mai 1924
concernant l'admission des étran-
gers dans les universités françaises,